

Գանատայի տարածքին ոգեկոչուեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակը



Թորոնթօ

Կիրակի, 26 ապրիլ 2026-ին, Թորոնթօյի Հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակին նուիրուած ժողովրդային ոգեկոչում: Ձեռնարկին ներկայ էին համայնքի հոգեւորականներ, քաղաքական եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ թորոնթօյի գաղութի կազմակերպութիւններու անդամներ եւ համակիրներ:

ՀՄԸՄ-ի շեփորախումբի օրհներգներով եւ սկաուտներու տողանցքով բացուած ձեռնարկին բացման խօսքով հանդէս եկաւ Աւետիս Գրճիքեան, որ ներկայութիւնը հրաւիրեց շարունակելու ազգային պայքարը: Հանդիսավարներ Հուրինա Պէրպէրեան Վերտանեանն ու Աւետիս Գրճիքեան առաջնորդեցին զեղարուեստական յայտագիրը, որուն մասնակցեցան երաժիշտներ, ասմունքողներ եւ ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի աշակերտներ:

Մրահի մուտքին ներկայացուած էր Արեւմտեան Հայաստանի քարտէսը՝ պատրաստուած երիտասարդական եւ պատանեկան միութիւններու կողմէ: Ներկայութիւնը այնտեղ նշեցին իրենց պապեանական բնակավայրերը եւ անմոռուկ հուշերը ցանցին՝ իբրեւ յիշողութեան եւ վերածնունդի խորհրդանիշ:

Օրուան պատգամաբեր Բաֆֆի Սարգիսեան իր խօսքին մէջ անդրադարձաւ ցեղասպանութենէն փրկուած եւ ձորճթառուի մէջ հաստատուած Հայ որբերու կեանքին՝ ընդգծելով անոնց դերակատարութիւնը հայապահպանութեան գործին մէջ: Ան նշեց ընտանիքի, դպրոցի եւ համայնքային կառոյցներու կարեւորութիւնը հայ ինքնութեան պահպանման մէջ, անդրադարձաւ նաեւ ներկայ մարտահրաւէրներուն եւ կոչ ուղղեց շարունակելու պայքարը յանուն հօր եւ միացեալ Հայաստանի:

Ձեռնարկը փակուեցաւ Տէր Գարեգին Մ. Վրդ. Շխրըտեանի «Պահպանիչ»-ով, որմէ ետք ներկայութիւնը ուղղուեցան դէպի յուշակոթող՝ ծաղիկներ գետեղելու: Ոգեկոչումը աւարտեցաւ «Կիրիկիա» մաղթերգով:

Հինգշաբթի, 23 ապրիլ 2026-ի երեկոյեան, Մարքհամի «Forest of Hope» յիշատակի պուրակին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցին նուիրուած մոմավառութեան եւ ոգեկոչման ձեռնարկը՝ կազմակերպութեամբ Թորոնթօյի Հայ դատի յանձնախումբին եւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան: Ձեռնարկը համախմբած էր հոգեւոր, քաղաքական եւ համայնքային ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ թորոնթօյի հոծ բազմութիւն մը:



Բացման խօսքերուն մէջ հանդիսավարներ Բալիկ Ասդուր եւ Յովհան Մկրտիչեան նշեցին, որ ոգեկոչումը միայն յիշատակում չէ, այլ նաեւ հաւաքական պահանջ՝ ուղղուած ժխտողականութեան եւ անպատժելիութեան դէմ: Մէկ վայրկեան լուռութենէ ետք հնչեցին ազգային քայլերգները՝ պատանեկան միութիւններու երգեցողութեամբ եւ ՀՄԸՄ-ի փողերախումբի ընկերակցութեամբ:

Խօսք առին օրհնադիր եւ համայնքային ներկայացուցիչներ, որոնք վերահաստատեցին իրենց աջակցութիւնը ցեղասպանութեան ճանաչման, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ կրթական համակարգին մէջ անոր ուսուցման կարեւորութեան: Ձեռնարկի ընթացքին խօսք առաւ նաեւ Օնթարիօյի խորհրդարանի նախկին խօսնակ Տէյվիտ Ուորըրը, որ իր ելոյթին մէջ ընդգծեց ցեղասպանութեան շարունակական հետեւանքները՝ անդրադառնալով նաեւ Արցախի դէմ վերջին զարգացումներուն:

Ձեռնարկը եզրափակուեցաւ Գերպ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Շխրըտեանի աղօթքով, որմէ ետք տեղի ունեցաւ մոմավառութիւն: Ներկայութիւնը մոմեր եւ ծաղիկներ գետեղեցին յուշակոթողին շուրջ՝ վերահաստատելով յիշողութեան, արդարութեան եւ պահանջատիրութեան իրենց հաւաքական յանձնառութիւնը:

Այլ ձեռնարկներու շարքին, ապրիլ 24-ի երեկոյեան տեղի ունեցաւ միջլարանուանական ոգեկոչում՝ Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական եկե-

Ոգեկոչում... Ծար. էջ 3

Celebrating 20 Years of Helping You Hear Better

Special May Offer: Hearing Aid Rejuvenation
Appointments \$299 (Reg. \$499)



hearing aid source
hearing instrument specialists

Learn more at hearingaidsource.ca

Toronto, ON
Main Floor, 702 Coxwell Ave,
Toronto, ON M4C 3B9
Ph: (416) 463-4327

Scarborough, ON
Parkway Mall,
85 Ellesmere Rd., Unit 29,
Scarborough, ON M1R 4B9
Ph: (416) 754-4327





Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Մրիֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիթի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Ոգեկոչում... Սկիզբը էջ 1

դեցեոյ մէջ: Ապրիլ 26-ի առաւօտեան տեղի ունեցաւ վազաբարչաւ՝ կազմակերպութեամբ ՀՅԴ ԳԵՄ-ի «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղին, իսկ ապրիլ 25-ին՝ արիւնատուութեան արչաւ՝ կազմակերպուած Օնթարիոյի Հայ-գանատական բժշկական ընկերակցութեան եւ Թորոնթոյի Հայ կեդրոնին կողմէ:



Մոնթրէալ-Լաւալ

Քեպէզի Հայ համայնքի միացեալ մարմնի կազմակերպութեամբ, շաբաթ, 25 ապրիլ 2026-ին, Մոնթրէալի ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկեան վարժարանի հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակի ոգեկոչման պաշտօնական ձեռնարկը՝ ներկայութեամբ դաշնակցային եւ նահանգային պատգամաւորներու, քաղաքապետական խորհուրդի անդամներու, հոգեւորականներու, համայնքային ներկայացուցիչներու եւ հոծ բազմութեան:

Ձեռնարկը սկսաւ ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ-ի սկսուածներու զրօշակիր մուտքով եւ ՀՄԸՄ-ի փողերախումբի նուագակցութեամբ, որմէ ետք հնչեցին Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները: Օրուան հանդիսավար Շարիս Մալեանց ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու ցեղասպանութեան նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀԲԸՄ Մոնթրէալի մասնաճիւղի ատենապետ Շահէ Թանաշեան, որ ընդգծեց, թէ ցեղասպանութեան ուրացումը կը խաթարէ միջազգային իրաւունքը եւ կը ստեղծէ վտանգաւոր նախադէպեր: Ան Արցախի վերջին իրադարձութիւնները բնութագրեց իբրեւ նոյն քաղաքականութեան շարունակութիւն եւ շեշտեց, որ յիշելը բաւարար չէ, այլ անհրաժեշտ է ձգտել արդարութեան եւ կանխարգելման:

Քեպէզի Հայ դատի յանձնախումբին անունով Պարոյր Ծովիկեան կոչ ուղղեց օրէնսդրական քայլերու՝ ցեղասպանութեան ժխտումը կանխելու, արցախահայուցութեան վերադարձի իրաւունքը պաշտպանելու եւ միջազգային իրաւունքի խախտումներուն դէմ պատժամիջոցներ կիրարկելու ուղղութեամբ: Նաեւ ընթերցուեցան վարչապետ Մարգ Բարնիի եւ ընդգիծութեան ղեկավար Փիեռ Փուալիերի ուղերձները, իսկ տարբեր մակարդակներու ընտրեալ պաշտօնատարներ վերահաստատեցին իրենց ղեկավարութիւնը հայ ժողովուրդի արդար պահանջներուն եւ համայնքի ներգրաւուածութեան:

Օրուան բանախօսը՝ նախկին արտաքին գործոց նախարար Սթեֆան Տրոն, իր խօսքին մէջ անդրադարձաւ ժողովրդավարութեան դերին՝ պետութիւններու զարգացման եւ հակամարտութիւններու լուծման մէջ, նաեւ յիշեց Արցախի հարցը եւ իր Հայաստան այցելութիւնը: Ձեռնարկի աւարտին անոր նուիրուեցաւ խորհրդանշական յուշանուէր, իսկ գեղարուեստական յայտագիրով հանդէս եկան աշակերտական, երգչախումբային եւ պարային խումբեր:

Ուրբաթ, 24 ապրիլ 2026-ին, Քեպէզի Հայ համայնքի միացեալ մարմնի կազմակերպութեամբ, Լաւալի քաղաքապետարանի Շոմէտի չրջանի կայանատեղիէն սկիզբ առաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակին նուիրուած ժողովրդային քայլարշաւը: Քայլարշաւին մասնակցեցան ՀՄԸՄ-ի Լաւալի փողերախումբն ու սկսուածական կազմը, ՀՅԴ ԳԵՄ-ի եւ Պատանեկան միութեան անդամները, ՀԲԸՄ-ի սկսուածները, հոգեւոր հայրեր եւ հոծ բազմութիւն մը:

Քայլարշաւը հասաւ Լաւալի մէջ վերջերս տեղափոխուած Հայոց ցեղասպանութեան յուշարձանին այգին, ուր տեղի ունեցաւ յուշարձանի պաշտօնական բացումը՝ դաշնակցային եւ նահանգային պատգամաւորներու, Լաւալի քաղաքապետ Սթեֆան Պոյէրի, քաղաքապետական խորհուրդի անդամներու, հոգեւորականներու եւ համայնքային ներկայացուցիչներու ներկայութեամբ: Արարողութիւնը սկսաւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներով, որմէ ետք հանդիսավարներ Ալին Պէրպէրեան եւ Մանէ Յովհաննիսեան բացման խօսքերով հանդէս եկան:



Հայ դատի յանձնախումբի անունով Արեւիկ Աֆարեան անդրադարձաւ յուշարձանի տեղափոխման կարեւորութեան՝ գայն նկատելով համայնքի եւ քաղաքապետարանի գործակցութեան յստակ արտայայտութիւն, իսկ Շահէ Թանաշեան ընդգծեց, թէ Հայ ժողովուրդը կը շարունակէ իր գոյատեւումը՝ յիշողութիւնը փոխանցելով մինչեւ արդարութեան վերականգնումը: Օրուան պատգամաբեր Լեւոն Աւետանեան իր խօսքը ուղղեց երիտասարդութեան՝ վերահաստատելով յիշողութիւնը եւ արդարութիւնը հետապնդելու պայքարը:

Լաւալի քաղաքապետ Ստեփան Պոյէր իր խօսքին մէջ բարձր գնահատեց Հայ համայնքի կենսունակութիւնը եւ ներգրաւուածութիւնը քաղաքին կեանքին մէջ, միաժամանակ յայտարարելով, որ յուշարձանին գտնուած այգին պիտի վերանուանուի «Parc de l'Espoir»՝ Յուսի այգի: Ծնորհակալական խօսքով հանդէս եկաւ նաեւ Սաբօ Եագուպեան՝ ընդգծելով յիշատակի պահպանման եւ փոխանցման կարեւորութիւնը:

Ձեռնարկը եզրափակուեցաւ գեղարուեստական յայտագիրով, որուն մասնակցեցան երգիչներ, ասմունքողներ եւ երաժիշտներ, ապա Արժ. Տէր Յակոբ Քհն. Կեստայեանի աղօթքով եւ յուշարձանին դիմաց ծաղիկներու զետեղումով:

Հինգշաբթի, 23 ապրիլ 2026-ին, Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանին սկիզբ առաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակին նուիրուած յիշատակի քայլերթը՝ մասնակցութեամբ աշակերտութեան, ուսուցչական կազմին, ծնողներու, հոգեւոր հայրերու եւ համայնքի ներկայացուցիչներու: Քայլերթը հասաւ Հայոց ցեղասպանութեան յուշարձանը, ուր միացան նաեւ Լաւալի Նարեկ եւ ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկեան վարժարաններու աշակերտները: Աշակերտները պահանջատիրական լողունգներով արտայայտեցին իրենց բողոքը ցեղասպանութեան ժխտման, Արցախի հայաթափման եւ Հայ ժողովուրդի իրաւունքներու անտեսման դէմ, իսկ ձեռնարկը բացուեցաւ օրհներգներով եւ հոգեւոր հայրերու աղօթքով:

Յայտագրի ընթացքին հնչեցին խօսքեր երիտասարդական ներկայացուցիչներու կողմէ, որոնք շեշտեցին համախմբման, յիշելու եւ պահանջատիրութեան անհրաժեշտութիւնը, մինչ աշակերտներ հայերէն եւ ֆրանսերէն ելոյթներով վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը՝ շարունակելու պայքարը: Գեղարուեստական յայտագիրը ներառեց երգ, ասմունք եւ պարային ելոյթներ, իսկ ձեռնարկը եզրափակուեցաւ ազգային երգերով եւ յուշարձանին շուրջ ծաղիկներու զետեղումով՝ ի յարգանք նահատակներուն:

Ուրբաթ, 24 ապրիլ 2026-ի կէսօրին, Մոնթրէալի մէջ, նախաձեռնութեամբ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ «Լուռ Աղօթք» խումբերուն եւ գործօն մասնակցութեամբ Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղին, ճաշ մատուցուեցաւ քաղաքամէջի Old Brewery Mission-ի անօթեւաններուն: Ձեռնարկը կը միտէր 1915-ի Հայոց ցեղասպանութեան նահատակներուն յիշատակը վերածել մարդասիրական գործի՝ ընդգծելով համայնքային ծառայութեան կարեւորութիւնը եւ օգնութեան ձեռք երկարելու պարտաւորութիւնը:

Ապրիլ 25-ին, կազմակերպութեամբ Մոնթրէալի ՀՄԸՄ-Կամբին եւ Լաւալի ՀՄԸՄ-ի մասնաճիւղին, տեղի ունեցաւ «Course pour la justice» խորհրդանշական վազաբարչաւը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան սրբադասուած նահատակներուն յիշատակին: Մօտ 120 մասնակիցներ Մոնթրէալի եւ Լաւալի Հայ համայնքներէն, ինչպէս նաեւ այլ քաղաքացիներ, 7 քլմ. վազքով իրարու կապեցին Marcellin-Wilson զբօսայգիի Հայոց ցեղասպանութեան յուշարձանն ու Parc de l'Espoir-ի յուշարձանը՝ համերաշխութեան ոգիով:

Ձեռնարկին ընթացքին խօսք առին երկու մասնաճիւղներուն ատենապետները՝ Արպի Ղազարեան եւ Յակոբ Սէմէրճեան, ինչպէս նաեւ ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտէի ներկայացուցիչ Յարութ Դաւիթեան եւ Քեպէզի խորհրդարանի պատգամաւոր Սոնա Լախոյեան Օլիվիէ: Անոնք շեշտեցին միասնականութեան, արժանապատիւ գոյակցութեան եւ յոյսով գործակցելու կարեւորութիւնը՝ նշելով, որ վազաբարչաւը կը խորհրդանշէ յիշողութեան պահպանումը, անարդարութեան դէմ պայքարը եւ գոյատեւման ոգին:

Օրօքաուս

Հինգշաբթի, 23 ապրիլին, Օթթաուայի մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-ամեակին նուիրուած քայլարշաւ եւ մոմավառութիւն: Քայլարշաւը սկսաւ Խորհրդարանի շրջափակէն եւ ուղղուեցաւ դէպի Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն՝ մասնակցութեամբ համայնքի անդամներու: Ձեռնարկը համատեղ կազմակերպուած էր Օթթաուայի Սուրբ Մեսրոպ եկեղեցւոյ, ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբին, Հայ Մշակութային հիմնարկութեան եւ ՀՕՄ-ի «Սեւան» մասնաճիւղին կողմէ:

Դեսպանատան առջեւ տեղի ունեցած մոմավառութեան ընթացքին Նեքթար Զաքարեան ընդգծեց Հայ ժողովուրդի տոկոսնութիւնն ու շարունակական գոյատեւումը՝ շեշտելով, որ ցեղասպանութիւնը չկրցաւ ջնջել հայութիւնը: Ան անդրադարձաւ նաեւ Արցախի վերջին իրադարձութիւններուն՝ զանոնք բնութագրելով իբրեւ պայքարի շարունակութիւն: Տէր Դաւիթ Քհն. Մարգարեան իր խօսքին մէջ կարեւորեց հաւատքի դերը եւ աղօթք մատուցեց նահատակներու յիշատակին:

Դեսպանատան անունով Կոր Ետիկարեան արժեւորեց համայնքի համախմբուածութիւնը եւ յիշողութեան պահպանումը: Ձեռնարկը եզրափակուեցաւ ծաղիկեպսակի զետեղումով եւ մոմավառութեամբ՝ ի յարգանք Հայոց ցեղասպանութեան սրբադասուած նահատակներուն:

Գեմպրիե



Կիրակի, 26 ապրիլ 2026-ին, Գեմպրիեի Հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցին նուիրուած պաշտօնական ոգեկոչման ձեռնարկը՝ կազմակերպութեամբ Գեմպրիեի Հայ Դատի յանձնախումբին:

Ոգեկոչում... Այկիբը էջ 3

Ձեռնարկին ներկայ էին Ս. Նշան Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Գերայ. Հայր Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան եւ հոգեւոր հովիւ Տէր Նշան Քհն. Մանուկեան, ինչպէս նաեւ Գեմպրիճի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Վեր. Արա Պալքեան, քաղաքական ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:

Յայտագիրը բացուեցաւ ՀՄԸՄ Գեմպրիճի սկստական կազմի եւ փոխերախումբի մուտքով, որմէ ետք հնչեցին Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները: Ապա, ներկաները հրաւիրուեցան մէկ վայրկեան յոտնկայ լուծեամբ յարգելու ցեղասպանութեան անմեղ նահատակներուն յիշատակը: Հանդիսավար Ալիս Նաճարեան իր բացման խօսքին մէջ շեշտեց, որ ցեղասպանութեան ոգեկոչումը կը գերազանցէ պարզ յիշատակումը՝ դառնալով արդարութեան եւ պահանջատիրութեան կոչ: Ապա խօսք առին քաղաքական ներկայացուցիչներ, որոնք վերահաստատեցին իրենց աջակցութիւնը ցեղասպանութեան ճանաչման եւ ժխտումին դէմ պայքարին:

Օրուան գլխաւոր պատգամաբերն էր Հայ Դատի կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Նաչատուրեան, որ իր ելոյթին մէջ ներկայացուց ցեղասպանութիւն եզրոյթի միջազգային իրաւական սահմանումը՝ շեշտելով, որ Հայոց ցեղասպանութիւնը կը համապատասխանէ այդ սահմանման բոլոր չափանիշներուն: Ան ընդգծեց նաեւ ցեղասպանութեան շարունակական բնոյթը՝ անդրադառնալով Արցախի հայութեան բռնի տեղահանութեան եւ մշակութային ոչնչացման, ինչպէս նաեւ Հայաստանի առջեւ կանգնած գոյութեան մարտահրաւէրներուն:

Ձեռնարկի ընթացքին ելոյթ ունեցան ՀՕՄ-ի «Մերոպ Թիթիգեան» շաբաթօրեայ վարժարանի աշակերտները, իսկ Ս. Նշան եկեղեցւոյ «Կիրիլիա» երգչախումբը ներկայացուց ազգային եւ յուշատիպ երգեր: Պաշտօնական հանդիսութիւնը փակուեցաւ հոգեւոր հայրերու աղօթքով:



Ուրբաթ, 24 ապրիլ 2026-ի երեկոյեան, Գեմպրիճի Հայ Համայնքը, եկեղեցական ոգեկոչման արարողութեանէն ետք, համախմբուեցաւ Հայ կեդրոնի «Փոստաճեան» սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ մտավառութեան ձեռնարկը՝ հոգեւոր հայրերու առաջնորդութեամբ կատարուած աղօթքով: Հնչեցին Հայաստանի եւ Արցախի օրհներգները, ինչպէս նաեւ «Մշակ բանուոր» քայլերգը, որմէ ետք մէկ վայրկեան լուծեամբ յարգուեցաւ ցեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքին մէջ Էլիսա Կիրակոսեան ընդգծեց յիշողութեան, արդարութեան եւ ինքնութեան պահպանման կարեւորութիւնը՝ կոչ ուղղելով շարունակելու պահանջատիրութեան պայքարը:

Ձեռնարկին ընթացքին խօսք առաւ Գարլօ Ահարոնեան՝ ՀՅԴ ԳԵՄ-ի «Արամ Մանուկեան» մասնաճիւղի վարչութեան անունով, շեշտելով երիտասարդութեան դերակատարութիւնը ազգային պայքարին մէջ եւ անդրադառնալով ներկայ մարտահրաւէրներուն: Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցան Ռազմիկ Կարպուչեան եւ Գարլօ Ահարոնեան: Ապա ներկաները մասնակցեցան ջահերով քայլերթի դէպի Մուսա լեռան յուշարձան, ուր վառեցին մոմեր՝ ի յիշատակ նահատակներուն: Ձեռնարկը եզրափակուեցաւ հիւրասիրութեամբ:

Սենթ Գաբրիել

Կիրակի, 26 ապրիլ 2026-ին, Սենթ Գաբրիելի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մասնակցութեամբ, Սենթ Գաբրիելի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցին նուիրուած պաշտօնական ոգեկոչում: Ձեռնարկին ներկայ էին քաղաքապետ Մամ Սիւքոյ, նահանգային երեսփոխան Ճէյնի Սթիվընզ,



դաշնակցային երեսփոխան Քրիս Պիթը, քաղաքապետական խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ համայնքային կազմակերպութիւններու եւ եկեղեցւոյ ներկայացուցիչներ:

Յայտագիրը բացուեցաւ հանդիսավարներ Արմինէ Ղազարեանի եւ Ալիս Այվազեանի խօսքով, որմէ ետք ՀՄԸՄ Սենթ Գաբրիելի սկստականները՝ Սեպուհ Թոքաճեանի ընկերակցութեամբ, վառեցին յաւերժութեան ջահը՝ խորհրդանշելով սերունդներու շարունակականութիւնն ու պայքարի յարատեւումը: Քաղաքական ներկայացուցիչները իրենց խօսքերուն մէջ յարգեցին մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը՝ շեշտելով յիշողութեան պահպանման, ժխտողականութեան դէմ պայքարի եւ նոր

սերունդներու դաստիարակութեան կարեւորութիւնը: Ապա երիտասարդ Սիլվանա Օքաճեան անդրադարձաւ ցեղասպանութեան հետեւանքներուն իր սերունդին վրայ՝ ընդգծելով յիշելու եւ պահանջելու հրամայականը:

Գեղարուեստական բաժնին մէջ մեներգով հանդէս եկաւ Արմինէ Ղազարեան, իսկ օրուան պատգամը փոխանցեց փրոֆեսոր Յովիկ Գուլումճեան, որ ընդգծեց Հայ Դատի պայքարի հետեւողականութեան եւ ուժեղացման անհրաժեշտութիւնը՝ յիշեցնելով գանատահայութեան դերը ազգային նպատակներու իրականացման մէջ: Ձեռնարկը եզրափակուեցաւ ծաղկեպսակի զետեղումով՝ Հայոց ցեղասպանութեան յուշակոթողին առջեւ:

Վանգուվըր

Վանգուվըրի Հայ Համայնքը, ապրիլ 26-ին, Վանգուվըրի «Mountain View Cemetery»-ի մէջ համախմբուեցաւ ոգեկոչելու Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցը: Հայ Համայնքի միացեալ մարմիններու կազմակերպութեամբ տեղի ունեցած



ձեռնարկը միաժամանակ եղաւ յարգանքի տուրք մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակին եւ վկայութիւն՝ համայնքի տոկուն գոյատեւման: Ձեռնարկը տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան յուշարձանին առջեւ, ուր հանդիսավարութիւնը ստանձնած էր ՀՅԴ ԳԵՄ-ի անդամ Լորիկ Քորաճեան:

Ձեռնարկին ներկայ գտնուող քաղաքական անձնաւորութիւնները ընդգծեցին յիշողութեան պահպանման եւ անարդարութեան դէմ համախմբուած պայքարի կարեւորութիւնը: Ձեռնարկին մէջ առանձնապատուկ տեղ գրաւեց երիտասարդութեան մասնակցութիւնը. Ս. Ներսէս Շնորհալի եւ ՀՕՄ-ի «Արազ» վարժարաններու աշակերտները ներկայացուցին երգեր, ասմունքներ եւ պատմական անդրադարձներ՝ շեշտելով հայութեան գոյատեւման պայքարն ու վճռակամութիւնը:

Գլխաւոր բանախօս փրոֆեսոր Ճեֆ Սահադէօ իր ելոյթին մէջ ներկայացուց ցեղասպանութեան ճանաչման պատմական ընթացքը՝ ընդգծելով անոր համամարդկային պատգամը: Ձեռնարկը աւարտեցաւ աղօթքով՝ Գերայ. Տ. Վարդան Թաշճեանի եւ Տ. Գեղարդ Կարապետեանի կողմէ, ապա տեղի ունեցաւ հաւաքով: Ոգեկոչումը վերահաստատեց համայնքի յանձնառութիւնը՝ շարունակելու մշակոյթի, լեզուի եւ յիշողութեան պահպանումը:

Կազմակերպութեամբ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանին եւ ՀՅԴ ԳԵՄ-ի Վանգուվըրի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղին, եւ մասնակցութեամբ Պրիթիչ Գոլոմպիայի Հայկական Միացեալ յանձնախումբին՝ ապրիլ 23-ին Պրիթիչ Գոլոմպիայի նահանգային խորհրդարանին մէջ ոգեկոչուեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցը: Ձեռնարկին ներկայ էին նահանգային պաշտօնատարներ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, համայնքային գործիչներ եւ բազմաթիւ քաղաքացիներ: Մասնակցեցան նաեւ նահանգային նախարար Ատրիան Տիքս եւ խորհրդարանի անդամներ Ռիան Կասփըր ու Ռապ Պոթըրը:

Ելոյթներուն ընթացքին շեշտուեցաւ, որ Հայ ժողովուրդի տառապանքները չեն սահմանափակուել 1915-ով, այլ կը շարունակուին մինչեւ այսօր՝ յատկապէս Արցախի հայաթափման եւ մշակութային ժառանգութեան ոչնչացման իրողութիւններով: ՀՅԴ ԳԵՄ-ի ներկայացուցիչներ ՄՏեր Ասայեան եւ Սեզա Քորաճեան ընդգծեցին երիտասարդութեան դերակատարութիւնը յիշողութեան պահպանման եւ իրաւունքներու պաշտպանութեան մէջ: Ձեռնարկը ներառեց նաեւ հոգեւոր բաժին եւ եզրափակուեցաւ Հայաստանի եւ Արցախի դրօշներու բարձրացմամբ:

Համիլթըն

Կիրակի, 26 ապրիլին, կազմակերպութեամբ Համիլթընի Ս. Մարիամ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ եւ ՀՅԴ «Վառման» կոմիտէութեան Հայ Դատի յանձնախումբին, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարելիցին նուիրուած ոգեկոչում: Ձեռնարկը սկսաւ առաւօտեան Ս. Մարիամ եկեղեցւոյ մէջ՝ յատուկ յիշատակումով եւ մատաղի օրհնութեամբ, որմէ ետք ներկաները ուղղուեցան Հայ կեդրոն:

Պաշտօնական յայտագիրը մեկնարկեց ջահավառութեամբ՝ հին ու նոր սերունդներու մասնակցութեամբ: Օրուան բանախօս տղթ. Ժան Պէպէճեան փոխանցեց օրուան պատգամը, իսկ քաղաքական ներկայացուցիչները իրենց զօրակցութիւնը յայտնեցին համայնքին: Ձեռնարկը աւարտեցաւ Արթ. Տէր Հրանդ Քհն. Մանուկեանի փակման խօսքով եւ «Պահպանիչ»-ով:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար այցելել «Հորիզոն»-ի կայքէջը՝ www.horizonweekly.ca

Advertisement for Voyages Haig Travel, featuring contact information and a logo. Text includes: Voyages Haig Travel, 3850-4 ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ... ԼՄԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ, *Նոր Հասցէ՝ Voyages Haig Travel, 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2, Tel: + 1 514-284-7676, Email info@haigravel.ca

Դաշնակցական երիտասարդության ճայնը բարձր հնչեց մայրաքաղաք Օթթաուայի մէջ



ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ, 24 Ապրիլ 2026-ին, Օթթաուայի մէջ տեղի ունեցաւ պահանջատիրական երթ եւ բողոքի ցոյցերու շարք մը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 111-րդ տարելիցին: Գանատայի տարբեր շրջաններէն ժամանած ԳԵՄ-ականներ մայրաքաղաքի փողոցներուն մէջ բարձրացուցին հայութեան արդար իրաւունքներու պաշտպանութեան ձայնը՝ թիրախաւորելով թէ՛ արտաքին թշնամիներու յարձակողապաշտութիւնը եւ թէ՛ հայրենի իշխանութիւններու զիջողական կեցուածքը:

Օրուան գործողութիւնները սկիզբ առին Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան առջեւ, ուր կատարուեցաւ ծաղկեպսակի զետեղման արարողութիւն՝ ի յիշատակ մէկուկէս միլիոն անմեղ նահատակներուն: Այնուհետեւ, երիտասարդները դեսպանատան յանձնեցին պաշտօնական նամակ մը եւ իրականացուցին բողոքի ցոյց: Ելոյթ ունեցողները իրենց վրդովմունքը յայտնեցին Հայաստանի Հանրապետութեան ներկայ վարչախումբին վարած ապագային քաղաքականութեան դէմ՝ կոչ ուղղելով դեսպանատան՝ կանգնելու ժողովուրդին, եկեղեցւոյ եւ Արցախի անշրջելի իրաւունքներու կողքին, փոխանակ ներկայացնելու իշխանութիւններու պարտաւորական կեցուածքը:

Ապա, քայլարշաւը ուղղուեցաւ դէպի Ատրպէյճանի դեսպանատուն, ուր ցուցարարները դատապարտեցին Արցախի բռնազրաւումը, հայկական մշակութային ժառանգութեան անճիտումը եւ հայ ռազմագերիներու անօրինական կալանաւորումը: Յաջորդել, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) դրասնեակի եւ Օթթաուայի կեդրոնական Byward Market-ի մէջ, երիտասարդները անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով իրազեկեցին հանրութիւնը՝ շեշտելով, որ միջազգային ընտանիքի անտարբերութիւնը մեղսակցութիւն է ատրպէյճանական եւ թրքական ոճիրներուն:

Բողոքի այս լայնածաւալ արշաւը իր աւարտին հասաւ Թուրքիոյ դեսպանատան առջեւ, ուր երիտասարդութիւնը վերահաստատեց իր պահանջատիրական կամքը ընդդէմ թրքական ժխտողականութեան: Դեսպանատան առջեւ հնչած վերջին ելոյթին մէջ շեշտուեցաւ, որ 111 տարի ետք ալ հայութիւնը կը մնայ դիմադրող եւ չի հաշտուիր ո՛չ Թուրքիոյ ցեղասպանական ծրագիրներուն եւ ո՛չ ալ հայկական հողերը զիջող դիւանագիտութեան հետ: «Հայաստանը յաւիտեան պիտի ապրի» կարգախօսով երիտասարդները եզրափակեցին օրը՝ ուխտելով շարունակել պայքարը մինչեւ արդար հատուցում:

Տ. Գառնիկ Ա. ՔՈՆ. Գոյունեանի «Սփիւռք Ինքնութիւն/Այլութիւն» Բ. հատորի շնորհանդէսը



Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի, եւ կազմակերպութեամբ՝ Ազգային Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան Բաժանմունքին, հինգշաբթի, 16 ապրիլ 2026-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ, Արժանապատիւ Տ. Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեանի խմբագրած «Սփիւռք Ինքնութիւն / Այլութիւն» հատորի շնորհանդէսը:

Երեկոն բացուեցաւ Առաջնորդի Օգնական Հոգեշնորհ Տ. Յակոբ Վարդապետ Եագուպեանի բացման խօսքով:

Հատորի ներկայացումը կատարեց «Հորիզոն» Մետիայի Օգնական Խմբագիր Տիկին Սոնա Թիթիգեան, որ հանգամանօրէն ներկայացուց զիրքին բովանդակութիւնն ու կառուցուածքը: Ան յատկապէս անդրադարձաւ սփիւռքեան կեանքի մարտահրաւէրներուն եւ ինքնութեան ձեւաւորման հարցերուն:

Ներկայացումէն ետք Տիկին Թիթիգեան քանի մը հարցումներ ուղղեց Տէր Հօր՝ անոր վերլուծական մօտեցումներուն եւ գիրքին խորքային գաղափարներուն վերաբերեալ:

Գիրքի շնորհանդէսին իրենց գեղարուեստական եւ ընթերցողական մասնակցութիւնը բերին՝ Տիկին Լաուրա Մեխակեան Պէրպէրեան, Տիկին Քրիսթինա Սրապոնեան Սանտեան, Տիկին Մեղրի Պապարեան Քիլերեան եւ Օրիորդ Զուարթ Պէրպէրեան:

Փակման խօսքէն առաջ, Արժանապատիւ Տ. Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեան արտասանեց իր շնորհակալական խօսքը՝ երախտագիտութիւն յայտնելով բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութեամբ եւ աջակցութեամբ նպաստեցին այս հատորի լոյս ընծայման եւ շնորհանդէսի կազմակերպման:

Երեկոյի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր պատգամը եւ շեշտեց, որ սփիւռքագէտ մտաւորականներու յօգուածներու եւ աշխատասիրութիւններուն ճամբով, առիթ կ'ունենանք անդրադառնալու Սփիւռքի այսօրուան մարտահրաւէրներուն եւ ըստ այնմ ծրագիրներ մշակելու ու միասնաբար եկեղեցի եւ կազմակերպութիւններ ղեկավարելու ու զօրացնելու սփիւռքը յանուն մեծ տեսլականին՝ ամբողջական Հայաստանին:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքը յայտնեց Տէր Հօր անոր տարած հակայական աշխատանքին համար, ինչպէս նաեւ Տիկին Սոնա Թիթիգեանին, որ մանրամասնօրէն ներկայացուց Տէր Հօր պատրաստած արժէքաւոր աշխատասիրութիւնը:

Ձեռնարկը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:
ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Գանատայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան կազմակերպութեամբ Հաւայի մէջ տեղի ունեցաւ «Հայաստան՝ 3000 տարուան պատմութիւն» թեմայով սեմինարը

Չորեքշաբթի, 22 ապրիլ 2026-ին, երեկոյան ժամը 7:00-ին, Լաւալի մէջ գտնուող Մոնթրէալի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Հայաստան՝ 3000 տարուան պատմութիւն» խորագրով սեմինարը՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան, կազմակերպութեամբ Գանատայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան, բանախօսութեամբ Ֆրանսայէն յատկապէս այս առթիւ հրաւիրուած պատմաբան, Աստուածաբան, հեղինակ եւ դասախօս Վերապատուելի դոկտ. Ռընէ Լեւոնեանի:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսէսեան, որմէ ետք միջոցառման բացումը կատարեց եկեղեցւոյն հոգեւոր հովիւ Պատուելի Մարտիրոս Էլէնճեան, որուն յաջորդեց գեղարուեստական յայտագիր: Նախ Անդրանիկ Փաշոյլեան կատարեց «Սարերի հովին մեռնեմ» տուտուկով նուագակցութիւնը, ապա հանդէս եկաւ Շուշանիկ Մելքոնեան իր համադրած «Պատգամ քո ջերմ ապրողաց» սամուկ-քով, պարբերաբար նուագակցութեամբ Անդրանիկ Փաշոյլեանի:

Սեմինարի բանախօսն էր Ֆրանսայէն յատկապէս այս առթիւ հրաւիրուած, Եւրասիայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան ներկայացուցիչ եւ միութեան նախագահ, ինչպէս նաեւ

Լիոնի Կաթողիկ համալսարանի հայագիտական ամպլոնի տնօրէն, Վերապատուելի դոկտ. Ռընէ Լեւոնեան, որուն բանախօսութեան հիմնական թեման էր «Հայաստան՝ 3000 տարուան պատմութիւն - Քրիստոնէական երկիր՝ երէկ եւ այսօր - անցեալէն քաղուած դասեր - ապագայի յոյս ուղեցոյց» նիւթը՝ 2025-ին իր հրատարակած «Arménie, terre chrétienne hier et aujourd'hui» գիրքին ներկայացմամբ:

Լեւոնեան պատասխի վրայ քարտէսներու ցուցադրութեամբ, նախ հակիրճ կերպով անդրադարձաւ հայ ժողովուրդի ծագումին՝ Ուրարտական թագաւորութեան սկսեալ, անցնելով Հայոց պատմութեան հիմնական հանգրուաններէն, հասնելով մինչեւ Տրդատ թագաւորի օրերուն, Գրիգոր Լուսաւորիչի եւ Քրիստոնէութեան պետական կրօնը հռչակումին, ապա Գիրբերու գիւտին եւ Աստուածաշունչի թարգմանութեան, որ կոչուեցաւ Թագուհի Թարգմանչաց:

Վերապատուելին յիշեց մեր պատմութեան վերելքի եւ անկումի ժամանակահատուածները, աղէտներն ու նուաճումները, բարեաւաճութեան եւ գահազրկման շրջանները, քարտէսներով ցոյց տալով Մեծ Հայքի, Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ սահմանները, իշխաններու եւ մելիքներու պատմութիւնները, հասնելով մինչեւ Ցեղասպանութեան, անկախութեան ապա խորհրդայնացման տարիներուն: Ան նաեւ ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Արցախը՝ տարբեր ժամանակահատուածներու իր սահմաններով, ապա անկախացումը՝ Հայաստանի եւ Արցախի, քառօրեայ պատերազմը, քառասունչորսօրեան, շրջափակումը, հայաթափումն ու բռնազաղթը:

Վերապատուելի Լեւոնեան յատուկ կերպով շեշտեց Հայ եկեղեցւոյ դերը, յատկապէս պետականազրկումի տարիներուն, ապա աւելցուց, թէ յաճախ կը խօսուի Հայ եկեղեցւոյ թերացումներուն մասին, սակայն կ'անտեսուի անոր մեծ ու ազգեցիկ դերակատարութիւնը դարերու ընթացքին, ոչ միայն պետութեան չգոյութեան ժամանակահատուածներուն, այլեւ նոյնիսկ անկախացման տարիներուն՝ Հայաստանի եւ Արցախի մէջ՝ ըլլալ շինարարական-նորոգման կամ ժողովուրդի ծառայութեան ոլորտներուն մէջ:



Վերապատուելին իր խօսքի աւարտին հանդէս եկաւ նախ՝ միասնութեան կոչով, յատկապէս շեշտելով թէ միասնութիւնն է մեր ուժի աղբիւրը, եւ թէ կարելի է մեր ժողովուրդին դիմաց ծառայած զժողովուրդները յղթահարել զիրար սիրելով, միասնակամութեամբ ու փոխադարձ հասկացողութեամբ: Ան նաեւ պնդեց, թէ եկեղեցին շատ մեծ դեր ունի կատարելիք այս հանգրուանին՝ համերաշխութեամբ համախմբելով մեր ժողովուրդը, ապա հրաւիրեց մեր ազգի գաւակները երբեք չյուսահատելու եւ մեր պատմութեան դասեր քաղելով պայծառ ապագայի հանդէպ մեր յոյսը վառ պահելու, զարկ տալով մեր հոգեւոր կեանքին, եկեղեցասիրութեան եւ Աստուծոյ մերձեցումին:

Աւարտին լուսաբանական հարցումներ ուղղուեցան բանախօսին, հնչեցին շնորհակալական խօսքեր: Վերապատուելի ժորձ Տապոյի աղօթքով փակուեցաւ միջոցառումը եւ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Սոնա Թիթիգեան Կէտիկեան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔԾԵԱՆ ԿԱՄ ՎԱՐՓԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեան մտածողութիւն մը)

ԳԱՂԱՓԱՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ...

Տեսանք, որ Քիւրքճեան Որբաշարի գիրին (ոչ-ամբողջական, նոյնիսկ՝ շատ մասնակի, որովհետեւ այլապէս պէտք է հատոր մը լեցնէր, գրած է - անկասկած՝ նուազագոյնը) եւ Ֆրանսահայ Գրականութեան երեւելի դէմքերու գրական վաստակին համառօտ ընթերցումներով՝ «գաղափարաբանութիւններ» վերլուծած է, նպատակ ունենալով անոնց արտաբանական կառոյցները կամ հոգեկազմերը սեւեռել, եւ անոնց մասհատ գաղափարներէն դուրս գալու կամ ելքի ստիպողականութիւնը շեշտել՝ վասն նորոգումի:

Գրած էի, թէ «Սփիւռք եւ Ինքնացում» հատորին մէջ գետեղեալ իր «Շողանկարումներ / Սփիւռքի Առաջին Սերունդէն» յօդուածաշարքին առաջին բխումը՝ վերնագրուած էր «Գաղափարաբանութիւնները / Սփիւռքահայ Գրականութեան Մէջ»: Առաջին բխման Ներածականին մէջ, յատկացուցած է ենթաբաժին մը (Ի՞նչ է Հասկնալ Հոս՝ «Գաղափարաբանութիւն» եզրով. եւ Ի՞նչ՝ «Գրականութեան Գաղափարաբանութիւններ» եզրով): Սոյն ենթաբաժինը գեղջած է «Սփիւռք եւ Ինքնացում»ի վերատեսալ յօդուածաշարքին մէջ, գուցէ՝ գայն անգոհացուցիչ համարելով, թէ՛ բովանդակութեան առումով, եւ թէ՛ բանաձեւման: Այսուհանդերձ, մեկնիչս Քիւրքճեանի բաց-ա-կայութեան ներողամտութիւն խնդրելով, գայն կ'օգտագործէ՝ որոշ յատկութիւն մը բերելու իր «գաղափարաբանութիւն» եզրին:

Արդ, ըսած է, թէ «անշահ բան է» սահմանել «գաղափարաբանութիւն»ը, նկատի ունենալով՝ որ «հարկւրաւոր հատորներ կարելի է գտնել, որեւէ գարգացած մշակոյթի լեզուով, որեւէ մեծ մատենադարանի մէջ», որոնք այդ ճիգը բրած են, եւ տուած եզրին «ընդհանրութիւններուն շուրջ» իրենց տեսակէտները: Նաեւ եզրը սահմանելու փորձ է կատարած, որովհետեւ է ուզած «այդքան փառասէր ըլլալ»: Բաւարարուած է՝ պարզագոյն բացատրութեամբ մը, թէ «գաղափարաբանութիւնը ներյայտ կամ բացյայտ համակարգ մըն է գաղափարներու», որ աւելի կազմակերպ է քան դրացի «աշխարհայեացք» եզրը: Ըստ իրեն, թէ՛ աշխարհայեացքը եւ թէ՛ գաղափարաբանութիւնը «մարդկային տուեալ իրավիճակի մը առնչուող հոգեմտաւոր արտադրութիւն» են: Ակնարկած է, թէ ոմանք կը հակին գանոնք հասկնալ իբր իրավիճակէն կամ կեանքի իրական պայմաններէն բխող երեւոյթներ, այլ՝ հակադրուելով «նիւթապաշտ այս մտեցումին», կը հակին գանոնք հասկնալ «ոգեպաշտ մտեցում»ով, ըստ որուն՝ «գաղափարական-հոգեկան իրականութիւնն է, որ կենցաղի եւ նիւթեղէն կեանքի ծնունդ կու տայ»: Այս ակնարկութիւնն ալ շատ արագ ձգած է, ըսելով՝ թէ իր ներածականը տեղը է «այս կեցուածքները, կամ՝ իրենց երանգեալ տարբերակները աչքէ անցընելու»:

Մինչեւ այստեղ իր ըսածներուն մէջ, կէտը որ պէտք է ի մտի ունենալ՝ այն է, թէ գաղափարաբանութիւն մը համակարգ է, որ կրնայ ներյայտ կամ բացյայտ ըլլալ, եւ

թէ՛ անիկա հոգե-մտաւոր արտադրութիւն է:

Համաձայն իրեն, գրականութիւնն է ներյայտ գաղափարաբանութեան տարածքը: Գրականութեան պարագային, բացյայտ գաղափարաբանական ըլլալը՝ դադարումն է ստեղծագործութեան արուեստի բնոյթին: Գրական արուեստը, ինչպէս որեւէ արուեստ, ներյայտօրէն գաղափարաբանական միայն կրնայ ըլլալ: Եւ գրականութեան գաղափարաբանական համակարգը՝ յաճախ «անգիտակից» կ'ըլլայ: «Անգիտակից» եւ համակարգ. ինձի համար քիչ մը շատ իրարու օտար կը հնչեն: Բայց քանի իրարու առնչուած են իր գրիչին տակ, «անգիտակից»ը չեմ հասկնար այնպէս, թէ հեղինակները չեն տեսներ իրենց գաղափարները, այլ գանոնք կը կազմակերպեն՝ առանց դրութեան կարգաւորութեան մը ձգտելու, եւ լոկ հոգեխառնութեան մը եւ մտայնութեան մը մարմինը կազմելու, անոնց մարմին մը տալու:

Բացյայտ գաղափարաբանութեան տարածքը՝ «առհասարակ» քաղաքական կազմակերպութիւններէն «սեւով ճերմակի վրայ խմբագրուած»ն է (վստահաբար՝ ոչ միայն...), որ կարգ մը կազմակերպութիւններու մօտ «իբր գիմակ» կը ծառայէ եւ «շահեր» կը ծածկէ. այս տեսակները՝ չակերտելի են, այսինքն՝ կեղծիքներ են: Ուրեմն, ըստ Քիւրքճեանի, կան քաղաքական թէ՛ գաղափարաբանութիւններ, եւ թէ՛ կեղծ-գաղափարաբանութիւններ: Յիշեմ, որ Քիւրքճեան ՀՅԴ-ի մտաւորական մըն էր, այլեւ՝ խմբագիրը երկու հատորի (նախատեսած էր երրորդ հատոր մըն ալ, որ նուիրուած պիտի ըլլար ՀՅԴ-ի ռազմավարութեան, որուն ճակատագիրը՝ չեմ գիտեր, թէ ի՞նչ եղած է...), որոնց ընդհանուր տիրոջն է՝ «Գաղափարագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան». Ա. հատորը ունի «Գաղափարաբանութիւն» անունը, իսկ Բ. հատորը՝ «Կազմակերպութիւն»: «Բացյայտ» գաղափարաբանութեան չակերտելի տեսակին ակնարկեցի: Անչակերտը ինչպէ՞ս տեսած է. 1) Որպէս «մտածում» մը «գանազան հարցերու եւ երեւոյթներու շուրջ». կազմակերպական կառոյց, գաղափարա-բարոյական թէ՛ հոգեբանական ու ընկերաբանական սկզբունքներ, պատմական «ձեւաւորումներ»ուն՝ «ներկայ-գործնական թէ՛ հեռանկարային ինդիքներ: 2) Գաղափարներու համակարգ, որ «քննարկումներու վերանորոգ թափ»ի ենթակայ ըլլալու է: Քննարկում-այժմէականացումը յատուկ ըլլալու է ներկայի մը մարտահրաշխան, այլ միշտ կատարելի: 3) Քննարկում-այժմէականացում՝ որ սակայն իր «հիմնական աւանդ»ին կամ «անփոփոխելի»ին յանձնառու կ'ըլլայ (այս կէտին համար իր բացատրութիւնը նախընտրած է «աւանդական» մնալ, եւ ՀՅԴ-ի «հիմնական աւանդ»ը նկատի ունենալով՝ գայն պարզած է իբր կազմակերպական ապակեզոտնացում՝ գաղափարա-բարոյական կեղծոնացման մէջ»:

Յօդուածիս ընթերցողը թող չհնդուի, որ «բացյայտ» գաղափարաբանութիւնը լուսաբանելու ճիգիս մէջ յամեցայ քիչ մը, հարկադրաբար քալելով մտաւորակա-

նին քայլերով, որ սակայն անօգուտ ալ չէ: Եւ հիմա կը դառնամ իր առաջադրութեան գիծին:

Իր ընթերցած էջերը, յետ-եղեռնեան գրական կամ ներյայտ գաղափարաբանութիւնը տեսած են ընկղմած անցելապաշտութեան, փախուստի, կեղծ-վիպականութեան, անհատի երկփեղկուածութեան, այլամերժութեան, ներկայի անտեսումին մէջ: (Կը փութամ այստեղ աւելցնելու ընդվզումս այն կարծիքին, որ վերջերս բարձրաձայնուեցաւ, թէ այս տեսակի դիտարկումներ՝ Հայաստանի անկայուն իշխանաւորին խաբեբայութիւններուն հետ կը նոյնանան: Քիւրքճեան պատեհապաշտ մը չէր, այլ՝ պարկեշտ ու անշահախնդիր մտաւորական մը, նախանձախնդիր ժառանգութեան: Եւ հայակերտումի իր տեսլականը՝ անխառն էր, գերծ՝ ուրացումի որեւէ ստուերէ...): Անշուշտ, արդար պիտի չըլլար պնդել, թէ Ֆրանսահայ Գրականութիւնը այսպէս եղաւ ամբողջութեամբ: Շահան Շահուր յտակօրէն անցք մը կրցած էր բանալ, կամ՝ «համբարձում» մը արարել Ջարեհ Որբունի՝ բարձրացած էր «եւ եղեմ մարդ»ի հասունութեան. իսկ Նիկողոս Սարաֆեան՝ «հրաշալիօրէն գանցած» Գլխազիլ Մահուան ստորգութիւնները:

Սփիւռքի այս վաւերական բանաստեղծին գաղափարաբանութեան յատկանիշները. մտածումով գաղափարներու վերատեսութիւն. գանցում ընթացիկ իրապաշտութեան, սեւեռում ո՛չ թէ մտահերձեալ եւ մարմնահերձեալ գոյութեան, այլ՝ գոյաստեղծ լինելութեան, ուր միտքն ու մարմինը կ'ըլլան ամբողջապէս իրենց այժմէութիւնը. եւ դիմում դէպի ինքնացման նոր հեռանկարներ: Ահաւասիկ Սփիւռքին գաղափարաբանական նորոգիչ սկզբունքները:

Իր տեսութեամբ, Սփիւռքը իր ներյայտ (նաեւ՝ բացյայտ) գաղափարաբանութիւններով չի կրնար իր լիներութիւնը արարել՝ եթէ մնայ քարացումի մէջ: Որեւէ գաղափարաբանութիւն որ աւանդութեան մէջ կը քարանայ՝ այլամերժութեան, ձուլման գետին է: Եւ որեւէ գաղափարաբանութիւն որ դէպի տարբերութիւն կը տարուի, այսինքն՝ գայն ընդունողները կրաւորական բարքով չեն անձնականացնէր աւանդութիւնը, ներկան եւ դուրսը՝ յանձնուած կ'ըլլան ձուլման... Անձնականացումը՝ գիտակցականացումն է աւանդութեան, ներկային եւ դուրսին, անոնց համարկումը՝ անհատական ինքնութեան:

Թէ նման իրագործումի մը պարագային՝ ինչպէ՞ս կ'ըլլայ կապը անհատական ինքնութեան եւ հաւաքական ինքնութեան, կամ թէ՛ ինչպէ՞ս անոնք իրարու կը կապուին: Ինք ուղղակիօրէն չէ բանաձեւած իր տեսակէտը, սակայն իր մտածումներուն մէջէն կարելի է ենթադրել գայն. ըստ որուն՝ անհատական ինքնութիւնը նման իրագործումի մը պարագային է, որ հասու կ'ըլլայ ընդգրկելու հաւաքականը՝ շնորհիւ ընդհանրացեալ գաղափարներուն եւ սկզբունքներուն, որոնք տարբերակեալ կամ տարբեր ինքնութեան մը կը ձգտին:

ԳԱՌՆԻԿ Ա. Գ. (Շարունակելի 7)

Chadir Meat & Restaurant
T. 416-750-7404
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4

Vahram Pirjanian President
METRAS Shipping and Forwarding Inc.
2175 Sheppard Ave. East, Suite 215, Toronto
Tel: 416-497-0377

Annie Varbed @gmail.com | www.AnnieVarbedian.com
416.918.3615
#1 RESIDENTIAL TOP PERFORMING PRODUCER

ARZ fine foods
The Essence of Mediterranean Gourmet Since 1989
Website: arzfinefoods.com
Email: info@arzfinefoods.com

Haroot Sepan
ARARAT
T +1 (416) 900 8626
F +1 (416) 900 8659
C +1 (416) 939 1895

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Gabriel Chahinian Broker 647-580-5818
Gary (Giro) Chahinian President, Broker of Record 416-258-8892

I.D.A. Part of the Rexall family of pharmacies.
Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2
Tel: 416.449.2040

ANI BAKERY
Middle Eastern Pizza Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Prime Minister Mark Carney issues statement marking Armenian Genocide Memorial Day

OTTAWA — Prime Minister Mark Carney issued an official statement on April 24 marking Armenian Genocide Memorial Day, joining Armenian communities in Canada and around the world in commemorating the victims of the 1915 Genocide.

In his message, Carney noted that Canada formally recognized the Armenian Genocide in 2006, describing it as a “long overdue acknowledgment” of the atrocities committed against the Armenian people. He emphasized the importance of remembrance, stating that it serves as a safeguard against the repetition of such crimes.

The Prime Minister also highlighted that April is recognized in Canada as Genocide Remembrance, Condemnation and Prevention Month, underscoring the need for continued vigilance in confronting hatred, discrimination, and violence.

“Through remembrance, we commit to vigilance — so that these atrocities are never repeated,” Carney stated, reaffirming Canada’s commitment to preserving the memory of the victims and promoting awareness of genocide prevention.

Declaration of the Diaspora Mobilization Conference

The Diaspora National Mobilization Conference took place from April 11 to 12, in Paris, bringing together more than 150 distinguished intellectuals, political leaders, and public and community figures from Armenia, Artsakh, and 26 countries across the Diaspora. The conference provided a comprehensive assessment of Armenia-Diaspora relations amid ongoing national challenges and evolving geopolitical realities, highlighting the urgent need for coordinated mobilization around a unified pan-Armenian agenda.

At the opening session of the conference, welcoming remarks were delivered by His Holiness Karekin II and His Holiness Aram I, as well as by the Speaker of the National Assembly of the Republic of Artsakh and Acting President of the Republic of Artsakh, Ashot Danielyan. Best wishes for the success of the conference were also conveyed by ARF Bureau Representative Armen Rustamyan.

Following discussions on the four-point agenda, the conference adopted relevant decisions, outlined key priorities, and identified the steps to be undertaken in that direction.

A. THE STRATEGIC ROLE OF THE DIASPORA AND THE POLITICAL AGENDA

The role of the Diaspora in addressing the challenges facing the Armenian people holds strategic importance. Today, as Armenian statehood faces serious security threats and the foundations of national identity are being targeted, a pan-Armenian mobilization around national agendas has become imperative. The national and state interests and goals of Armenia, Artsakh, and the Armenian people are inseparable.

At the current stage, the key priorities of the Diaspora’s political agenda are:

—Strengthening Armenian statehood. Developing and implementing a comprehensive strategic program aimed at reinforcing the Republic of Armenia’s strength and security.

—Recognition and reparation of the Armenian Genocide. Despite the policies pursued by the current authorities of Armenia, the international recognition of the Armenian Genocide and the pursuit of reparations remain imperative.

The Artsakh issue

The issue of Artsakh remains on the agenda and includes the following practical steps:

—Pursuing the immediate release of prisoners of war

—Protecting the rights of the people of Artsakh and internationalizing the right to

collective return

—Safeguarding the Armenian cultural heritage of occupied Artsakh

—Providing full support to the functioning of Artsakh’s state institutions

—Working to protect the civil rights and address the socio-economic challenges of forcibly displaced Armenians from Artsakh currently residing in Armenia

B. THE ROLE OF NATIONAL VALUES AND THE ARMENIAN CHURCH IN PRESERVING ARMENIAN IDENTITY IN THE DIASPORA

Armenian identity is rooted in Armenian history, the Armenian Church, language, culture, and national values, which constitute the fundamental pillars of the Diaspora’s existence. In the current critical circumstances, the Armenian Church, as in the past, continues to serve not only as a spiritual anchor but also as a cornerstone of the Armenian people’s national and spiritual identity.

Condemning the campaign unleashed by the authorities of the Republic of Armenia against Armenian values and the Armenian Apostolic Church, it is necessary to take into account the following priorities:

Resistance.

Any step or action directed

‘The Struggle Continues’

THE TRADITIONAL TORCHLIGHT MARCH TO DZIDZERNAGAPERT

YEREVAN—Under the slogan “The Struggle Continues,” tens of thousands turned out on April 23 for the torchlight procession to Didzernagapert on the eve of the anniversary of the Armenian Genocide — an event, which has become a tradition in Yerevan.

The event was organized by the Armenian Revolutionary Federation Supreme Council of Armenia, the ARF Youth Organization and the ARF Nikol Aghabalian Student Association and kicked off from Yerevan’s Republic Square.

Before the start of the torchlight march, ARF Supreme Council of Armenia Ishkhan Saghatelian and ARF Youth Organization’s Central Executive Zhora Avdalyan delivered remarks.

“Today, 111 years after the Armenian Genocide, we stand in the capital of the Armenian state to protect the inalienable rights of the Armenian people, to uphold our memory, to honor the memory of the victims of the Genocide, and to never allow another Genocide and deprivation of homeland. 111 years ago, they wanted to annihilate us, trying to destroy our identity. They wanted us to forget our symbols, not speak Armenian, not sing our songs, and deny our history,” Saghatelian said in his remarks.

“The Armenian people were able to find strength within themselves, recover, and build a statehood. From Hayk Nahapet to Avarayr, from Sardarabat to the Artsakh Liberation

War... the main objective of our struggle has been to preserve our identity and remain Armenian. And today, more than a century later, we are being attacked not with axes, but with the compulsion to deny and renounce our cause,” Saghatelian continued.

“The goal is the same: to annihilate Armenians. They force us not to be inspired by Ararat, they force us to forget Artsakh and the crime committed there, they force us to renounce the birth certificate of our state, the Declaration of Independence. And this is happening at a time when our churches are being destroyed in Artsakh, and our brothers are in Baku prisons and, in fact, the policy of Genocide continues. All this is being done with the participation and complicity of the criminal sitting in this building, Pashinyan,” Saghatelian said pointing to the government building.

The participants chanted slogans from Republic Square began the procession toward Dzidzernagapert, carrying with them the flags of Armenia and the Republic of Artsakh, as well as the flags of the countries that recognized the Armenian Genocide.

At the Dzidzernagapert Memorial Complex, marchers observed a minute of silence in memory of the more than 1.5 million victims of the Genocide and laid flowers around the eternal flame, where a prayers and a memorial service were held.

Exhibition honouring Armenian ‘Righteous among the nations’ held in Jerusalem

JERUSALEM — A commemorative exhibition dedicated to 24 Armenians recognized as “Righteous Among the Nations” by Yad Vashem was held in Jerusalem on Holocaust Remembrance Day. The event took place at the Clergy Seminary Hall in the Armenian Quarter of Old City of Jerusalem and drew hundreds of visitors.

The exhibition focused on stories of Armenians who rescued Jews during the Holocaust, many of whom had themselves survived the events of the 1915 Armenian Genocide. It featured photographs, archival materials, and personal accounts of rescuers who operated in several European countries, including Ukraine, Crimea, Austria, Hungary, and France.

The initiative was led by Yisca Harani, a scholar of Christianity and director of the Religious Freedom Data Center, an Israeli organization established in 2023. The center documents incidents affecting Christian religious freedom in Israel and promotes interfaith dialogue. The exhibition was organized in cooperation with the Armenian Patriarchate and the Armenian community in Jerusalem.

Among the attendees were representatives of Christian communities, residents of Jerusalem’s Old City, religious students, as well as diplomatic and municipal figures, including Israel’s Ambassador to Armenia Joel Lion and Jerusalem City Council member Yeela Bitton de Lange.

